ԱՐՄԵՆՈՒՀԻ ՇԱԽԲԱԶՅԱՆ

ՉԱՓ ՈՒ ՔԱՆԱԿԻ ԻՄԱՍՏ ԱՐՏԱՀԱՅՏՈՂ ԴԱՐՁՎԱԾՔՆԵՐ

Հայ լեզվաբանական գրականության մեջ դածվածքների վերաբերյալ գրվել են մի շարք աշխատություններ[1], որոնցում ամենայն մանրամասնությամբ քննարկված են դարձվածքների էությունը, կառուցվածքը, նրանց ոճական արժեքը: Սակայն դարձվածքները որպես լեզվի իմաստային դաշտերի, մասնավորապես չափ ու քանակի իմաստային դաշտի արտահայտման լեզվական միջոց, դեռևս ուսումնասիրված չէ: Այս հոդվածի նպատակն է ներկայացնել չափ ու քանակի ընդհանուր իմաստ արտահայտող գրեթե բոլոր դարձվածքները և դրանք դասակարգել ըստ նրանց արտահայտած հատկանիշների չափ ու քանակի աստիճանի:

Դարձվածքը կայուն բառակապակցություն կամ նախադասություն է[2], որի բաղադրիչները կորցնում են իրենց բառային ուղղակի իմաստը, ձեռք են բերում փոխաբերական իմաստ, միավորվում են մի միասնական ամբողջության մեջ, որի արդյունքում բառակապակցությունը վերաիմաստավորվում, ձեռք է բերում նոր դարձվածային իմաստ: Նրանք պատրաստի, վերարտադրելի միավորներ են, որոնք պատկերավորություն և հուզաարտահայտչականություն են հաղորդում խոսքին: Դարձվածքների չափ ու քանակի իմաստները պայմանավորված չեն նրանց կազմում չափ ու քանակ արտահայտող բառերի ներկայությամբ կամ բացակայությամբ: Այս առումով դարձվածքները կարելի է երեք խմբի բաժանել.

1. Դարձվածքներ, որոնց բաղադրիչներից որևէ մեկը ցույց է տալիս չափ ու քանակ: Նույնպիսի իմաստ ունեն նաև դարձվածքները, այսպես՝ կրակի <u>ձին</u> (թանկ), գրպանը <u>հաստ</u> (հարուստ), ձեռքը <u>կապած</u> (անզոր, իրավունքից զուրկ), ծտի <u>աաշաղ</u> (քիչ) ևն:

2. Դարձվածքներ, որոնց կազմում չկան չափ ու քանակ ցույց տվող բաղադրիչներ, սակայն դարձվածքներն արտահայտում են չափ ու քանակի իմաստ, այսպես՝ ձու մաշկող (ժլատ), գայլի ախորժակ (ագահ, որկրամոլ),

---

[1] Տե՛ս Պ. Բեդիրյան, Ժամանակակից հայերենի դարձվածաբանություն, Եր., 1978, Խ. Բաղիկյան, Ժամանակակից հայերենի դարձվածային միավորները, Եր., 1986:

[2] Գ. Ջահուկյան, Ֆ. Խլղաթյան, Հայոց լեզու, Ոճագիտություն, Եր., 1976, էջ 98, Խ. Բաղիկյան, նշվ. աշխ., Եր., 1986, էջ 292:

արծվի տեսողություն (սրատես), կոկորդին կանգնել (ծայրաստիճան կետի հասնել) ևն:

3. Դարձվածքներ, որոնցում թեև առկա են չափ ու քանակ ցույց տվող բառեր, սակայն նրանք այլ իմաստ են արտահայտում և մեր քննության ենթակա իմաստային դաշտից դուրս են մնում, այսպես <u>երկտակ</u> լինել (շողոքորթել), <u>խոռ</u> գլուխ տալ (խորհարհվել), լույսի <u>բաժին</u> լինել (մեռնել) ևն:

Չափ ու քանակի որոշ դարձվածքներում մեր հաշվումներով մոտ իննսունիններում գործածվում են մարդու մարմնի մասերի անվանումներ[3], հաճախադեպ են գլուխ (15), ձեռք (15), բերան (8), աչք (6) բառերը: Մարմնի մասերի անվանումներով կազմված գրեթե բոլոր դարձվածքները ընդգրկել ենք համապատասխան իմաստային ենթադաշտերում, ուստի ավելի նպատակահարմար ենք գտնում դրանք ներկայացնել հետագա շարադրանքում: Միաժամանակ պետք է ասել, որ չափ ու քանակի դարձվածքները շատ հաճախ հանդես են գալիս դարձվածային տարբերակներով, հոմանիշային շարքերով և հականիշներով[4]:

Հայտնի է, որ դարձվածքների իմաստային դրսևորման գործում մեծ դեր ունեն պատկերավորման ու արտահայտչական միջոցները[5]: Ուսումնասիրությունից պարզվել է, որ դարձվածքներում առավել շատ գործածվում են փոխաբերությունը, համեմատությունը, չափազանցությունը, նվազույթը, շրջասույթը երբեմն նաև օքսիմորոնը և պարադոքսը, որոնց մասին կխոսենք հետագա շարադրանքում:

Ըստ իրենց արտահայտած խոսքիմասային իմաստի՝ դարձվածքները լինում են գոյականական, ածականական, մակբայական և բայական, այսինքն՝ ցույց են տալիս առարկա և հատկանիշ, իսկ ըստ առարկայի և հատկանիշի չափ ու քանակի աստիճանի՝ դարձվածքները բաժանվում են մի քանի ենթախմբերի:

Առարկայի, հատկանիշի չափ ու քանակի առավել, առավելագույն աստիճան ցույց տվող դարձվածքներ[6]:

---

[3] Տե՛ս Ա. Սուքիասյան, Ս. Գալստյան, Հայոց լեզվի դարձվածաբանական բառարան, Եր., 1975:

[4] Տե՛ս Խ. Բադիկյան, Դարձվածային ոճագիտություն, Եր., 2000:

[5] Լ. Եզեկյան, Ոճագիտություն, Եր., 2003, էջ 332-357 և 360-368:

[6] Այս և մյուս ենթախմբերի դարձվածքների իմաստների բացատրությունները տրված են ըստ Ա. Սուքիասյանի, Ս. Գալստյանի նշվ. աշխ. (1975), Խ. Բադիկյանի «Ուսումնական դարձվածաբանական բառարանի» (2003), «Ռուս հայերեն դարձվածաբանական բառարանի» (1975) տվյալների:

Առարկաների և մասնավորապես մարդկանց բազմաքանակ լինելը. մի տեղում կուտակվելը, այլ կերպ՝ շատ լինելը չափազանցված կերպով բնութագրվում է տեղ ու դադար չլինել, ասեղ գզելու տեղ չլինել հոմանիշ դարվածքներով: Ավելի չափազանցնելով բազմության անթիվ, անհամար, անչափ շատ ու շատ լինելը՝ ժողովուրդը այն համեմատում է ծովի ավազների հետ՝ ասելով ծովի ավազների չափ, իսկ առարկաների մեծությունը, վիթխարի լինելը կապում է սարի՝ ամպի հետ՝ ստեղծելով սարի չափ, ամպի չափ կառույցները:

Առատության իմաստն արտահայտվում է նաև աչս կապի զուգորդությամբ, ինչպես՝ ծովի աչս, գետի աչս (հորդ, առատ) կամ նարնուտի աչս:

Որևէ բանի անթիվ, անհաշիվ հատկանիշը բնութագրվում է խելքից դուրս, մազերի համրանքով, շնից շատ (խոսակցական) դարձվածքներով:

Որևէ մեկի համեմատությամբ ունեցած առավելությունը, չափազանց շատ բարձր լինելը արտահայտվում է լոթ գախով բարձր դարձվածքը:

Հետաքրքիր է շան ոտի հետ գնալ դարձվածքը, որն ունի ոչ միայն առարկաների առատ, այլև էժան, գածր գին իմաստը:

Դարձվածքների միջոցով մեզ ներկայանում են մարդկային երկու հակադիր բնավորություններ. շռայլը, առատաձեռնը արժանանում է խոսողի դրական վերաբերմունքին և շրջասույթով անվանվում է հացով մարդ, սիրտը բաց, լայն սիրտ, բաց ձեռք դարձվածքներով:

Ընդհակառակը, ագահ, կծծի, չափազանց ժլատ մարդը դատապարտվում է դիպուկ, բայց բացասական հոմանիշ-մականուններով՝ ասեղ մաշկող, լմից ճարա հանող, լու մաշկող, ծու մաշկող ևն: Այս իմաստին է առնչվում նաև ագահ, անկուշտ, որկրամոլ մարդուն փոխաբերաբար տրված գայլի ախորժակ, ինչպես նաև Շարայի որնող դարձվածքները:

Բնութագրող մակդիրների օգնությամբ (յուղալի, յուղոտ, չաղլիկ) եկամտաբեր, շահութաբեր գործի վերաբերյալ ժողովուրդը կազմել է լուրայի (յուղոտ) աատաղ և չաղ աատաղ (խոսակցական) տարբերակները, իսկ նրանից շատ ստացողներն ունենում են մեծ աատաղ կամ առլուծի բաժին:

Յուղալի պատառից օգտվողների ղունչը մեղրի մեջ է կամ մի ձեռքը լուրի, իսկ մուսը մեղրի մեջ է, մի խոսքով՝ լոր են տալիս (մի բանի մեջ):

Այսպիսի պայմաններում ապրողներին ժողովուրդը արժանացնում է իր բացասական վերաբերմունքին, օգտագործելով մի քանի արհամարհական դարձվածքներ, ինչպես՝ գրաանը լցնել, տանը լցնել, փորը հաստացնել, միգը հաստացնել: Չեն անտեսվում նաև անսպասելի հարստության տեր դարձողները, որոնց գլխին տեղում է ոսկե անձրև:

Ժողովուրդը չէր կարող չնկատել, որ ոսկու տոպրակը իշխանավորների համար դառնում է կուռք՝ ոսկե հողք:

Բացի իրական հարստությունից, դարձվածքներում ներկայացված է երևակայական, ոչ իրագործելի ցանկություն հարստության վերաբերյալ, որն արտահայտված է ոսկե սարեռ խոստանալ դարձվածքում:

Չափազանց առատությունը, ճոխությունը, շռայլությունը քննադատվում է հունական դիցաբանությունից վերցված լուկուլլոսյան ճաշ (սեղան) և բաքչական խնջույք դարձվածքներով: Էլ ավելի բացասական երանգ ունի կապուստ ահեղոնեռ նորաբանությունը, որում երևում է ցոփությունը, զեխությունը:

Դարձվածքներում հեգնաբար «փառաբանվում է» փողը, կաշառքը, որպես անհնարինը հնարավոր դարձնող, մութը տեղը լույս տվող միջոց[7]:

Դարձվածքները ցույց են տալիս ոչ միայն մարդկանց նյութական հնարավորությունները, կարողությունները, այլև ֆիզիկական ուժը, հզորությունը: Զորեղ, ուժեղ մարդն ունի ծանր ձեռք (ամուր ձեռք), ջանը տեղն է, արծվի սիրտ ուտող (կերել) է, ունի առյուծի սիրտ:

Նյութական և ֆիզիկական հատկանիշներից բացի, կան նաև մտավոր հատկանիշները բնութագրող դարձվածքներ: Շատ խելոք, տաղանդավոր, բազմաշնորհ մարդկանց են վերաբերում խելքը գլխին, խելքը նստոտուն, խելքի տեր, խելքով մարդ և վերջապես խելոքին, իմաստունին համեմատելով ծովի լայնության, խորության, մեծության հետ՝ անվանում են խելքի ծով (ունի նաև հեգնական իմաստ) կամ պարզապես՝ լուսավոր գլուխ:

Կան նաև ֆիզիկական տարբեր հատկանիշներ ցույց տվող չափ ու քանակի մի շարք դարձվածքներ, այսպես՝ անչափ ծանր, ահռելի հատկանիշը խորհրդանշվում է եգիպտական աշխատանք, լեռ ու բեռ, ջրաոաքի քաղ, երկարատև քունը՝ լեթարգիական քուն, շատ երկար և խորը քունը՝ արջի քուն, հեռուն շատ լավ տեսնելը՝ արծվի աչք, երկարը՝ խոսքի կծիկը բաձել (բացվել), բարձրը՝ հոմերոսյան բոքիջ, ուժեղը՝ մեջքը պինդ (կռնակը պինդ), (փխբ. նաև հարուստ, զորեղ), մեծը՝ աաահս տարիքին (նաև ծեր, վաղնջական ժամանակներից) ևն:

Առարկայի հատկանիշի չափ ու քանակի նվազ, նվազագույն աստիճան ցույց տվող դարձվածքներ:

Հասարակության զարգացման նախնական շրջանում, երբ դեռ համայնքը անվճար օգտվում էր անսպառ ջրից, անծայրածիր հողատարա-

---

[7] Ժամանակակից պայմաններում, երբ կաշառքը, կաշառակերությունը հասել է բարձր աստիճանի, ոչիեաոնեոր կեռաև մարդկանց դարձվածքի համաբանությամբ ստեղծվել է կոռուագիաև կեռաև մարդկանց դարձվածքը:

ծություններից, մարդկանց գիտակցության մեջ ստեղծվեցին ջոհ գին, հոոհ գին բառակապակցությունները, որոնք մինչև այսօր էլ ծառայում են էժան ապրանքի կամ իրենց արժեքից ցածր գնով վաճառվող ապրանքների գնահատման չափանիշ: Ի հակադրություն վերջիններիս կրակը դժվար է ձեռք բերվել և առավել ևս պահպանվել, ուստի առաջացել է կոակի գին (թանկ) հականիշ դարձվածքը: Ինչ վերաբերում է շան մսի գին բառակապակցությանը, ապա այն բոլոր ժամանակներում էլ (շան միսը որպես սնունդ չօգտագործող ժողովուրդների համար) եղել է անարժեք իմաստի արտահայտիչը:

Անարժեք, անարժան մարդկանց վերաբերյալ ևս ստեղծվել են մի բուռ հող (կոպեկ) չարժել, քոռ կոպեկ չարժել, ականջով մեկ փոշի (թան, մոխիր) չարժել դարձվածքները: Սրանցից որոշ չափով տարբեր են կոպեկ չարժել, այքին (ս, դ) չեռևալ դարձվածքները, որոնցում ոչ թե իրական արժեքի գնի մասին է խոսվում, այլ որևէ առարկայի, երևույթի, դեպքի մասին, որը անհատի համար ոչ մի արժեք, նշանակություն չունի, աննշան է, անկարևոր: Տեղին է հիշել նաև շատ հարկավոր է, շատ պետք է դարձվածային տարբերակները:

Առարկաների և նրանց հատկանիշների նվազագույն չափ ու քանակ են ցույց տալիս հետևյալ դարձվածքները:

1. Համընթացման միջոցով, մի բուռ, մի կաթիլ, մի բեռան, մի փոր, մի կտոր դարձվածքները արտահայտում են նյութական նվազագույն միջոցներ, իսկ փոխաբերական իմաստով գործածվում է ծտի պաշար դարձվածքը:

2. Իրերի նվազ, նվազագույն, փոքր հատկանիշը արտահայտվում է մանրամունը, նաև փոխաբերաբար գործածվող ծտի աչք, ճնճղուկի աչք ևն, քիչը մատների վրա կարելի է հաշվել, հազվադեպ պատահողը հազարից մեկը, ալ առվես, ճրագով մանգալ, մազ մնար, թեթևը մի աբլուրի բեռ, ոտքից թեթև (թեթևասահ), ձիտ դառնալ (թեթևանալ), թեթևը և կարճը հավի քուն, կարճը և հակիրճը մի թիզ, մի խոսքով, լակոնիկական ասատասխան (բարձր ոճի), ցածրը գետնին կապած, գետնի կոճակ, թույլը (թուլանալ, թուլացնել) թատի կոտրել, աքիլեսյան գարշապար, անզորը ատամները հանած գայլ, բարակը օձի շապիկ, փոքրը տարիքային առումով բեռանից նաթի համ (հոտ) գալ, ձեռքը նոր ծլած, նաթը շոքունքներին չորացած, ձվից նոր դուրս եկած դարձվածքներում: Նիհար հատկանիշի վերաբերյալ ոճական զանազան հնարանքներով ստեղծվել են բազմաթիվ դարձվածքներ, որոնք խիստ ազգային են և արտահայտում են ժողովրդի սոցիալական ծանր վիճակը: Ահա դրանք *միսը գնացել, ոսկորն է մնացել, ոտքի վրա հալվել է, ոսկորը ոսկորին ծայն տալ, կաշի ու ոսկոր դառնալ, կողերն իրար կպած, ցամաք ծորի աղվես, օգոստոսի աղվես, քիթը բռնես հոգին կտա, մազը երեսին չորանալ, վիզը տանձի պոչ*

դառնալ, չամիչ դառնալ, հայհայը գնացել, վայվայն է մնացել, թել ու դերձան դառնալ (բրբ.) ևն:

Այս բոլոր տարբեր ոճերում գործածվող հոմանիշները կարելի է մեկ հականիշ դարձվածքով ամփոփել՝ սեռած – խմած:

Կես, կիսատ իմաստի կան մի շարք դարձվածքներ: Խոսքը չավարտելու, կիսատ մնալու, ընդհատվելու դեպքում խոսողը ասում է խոսքը (ս, ղ) բեռանը (բերանում) մնաց: Հետաքրքիր է աչքի պոչով արտահայտությունը, որում շեշտվում է, որ առարկային, անձին տեսել են ոչ լրիվ, ամբողջությամբ, այլ կիսով չափ, թերի: Գրեթե նույն իմաստային արժեքն ունի ականջի ծայրով դարձվածքը: Կես քայլ, քույլ բերան դարձվածքները, որոնք ոչ լրիվ, կիսով չափ կատարված կամ կատարվող գործողություններ են բնութագրում: Ճանապարհի կեսից ետ դառնալ, վնասի (սկսած գործի կեսից ետ դառնալ) հոմանիշ դարձվածքները պահանջում են, որ գործը վտանգավոր է կամ անօգուտ և պետք է թողնել այն: Մի որևէ վտանգավոր դեպք կատարվելու համար մի փոքրիկ բան պակասելիս անպայման կասվեր քիչ մնաց, մաց մնաց դարձվածքները:

Խիստ պատկերավոր է ուղտը կուլ տալ , պոչը կոկորդում մնալ (պոչից խռովել) դարձվածքը: Այստեղ չափազանցության միջոցով շեշտված է, որ գործի մեծ մասը կատարված է, մնացել է փոքրը: Թեռի իմաստով է գործածվում մի աչքով նայել դարձվածքը, այսինքն՝ արժանիքները չտեսնել կամ չուզենալ տեսնել, թերագնահատել: Առանձնապես քիչ են մոտավորության իմաստ ունեցողները, դրանցից շատ գործածական աչքի չափով, ականջի ծայրով և մոտավոր քանակություն ցույց տվող շատից-քչից դարձվածքները:

Հավաքականության, ամբողջականության հարաբերություն ցույց տվող դարձվածքներ :

Այս ենթադաշտի դարձվածքները կարելի է երկու ենթախմբի բաժանել:

1. Դարձվածքներ, որոնք տարբեր առարկաները հավաքելու, միավորելու, համախմբելու իմաստ են արտահայտում՝ հոան բեռել , հոան գալ , հ մի բեռել, ինչպես նաև հոան գլխի հավաքել , մեկի գլխին հավաքել դարձվածքները:

Արյունակցական կապերով կապված տարբեր սերունդների, ազգուտակի հավաքական ամբողջությունը ցայտուն արտահայտված է լոթ աորտ դարձվածքում: Իմաստով մի փոքր տարբեր է տնով-տեռով դարձվածքը, որը ներկայացնում է տվյալ ժամանակում ապրող ամբողջ ընտանիքը՝ գերդաստանը՝ իր ողջ ունեցվածքով:

2. Այս ենթախմբում տրված են նույն անձի կամ առարկայի ներքին կամ արտաքին հատկանիշների ամբողջությունը: Մի գործի նվիրվելու, սիրելու կամ

ատելու պարագայում ասվում է մինչև մազերի ծայրը , մինչև երունգների ծայրը. մինչև ուղն ու ծուծը , իսկ պայքարելու, մարտնչելու դեպքում մինչև արյան վերջին կաթիլը , մինչև վերջին շունչը , ինչպես նաև ոտքից մինչև գլուխ, ոտքից-գլուխ , մինչև ատամները զինված :

Իր հնարավորության ամբողջ չափով որևէ գործով կլանվողը, տարվողը իր խելքն ու միտքը տալիս է մի բանի կամ խելքն ու միտքը մի բանի վրա է պահում կամ լարում է իր ֆիզիկական ուժերը ինչքան ուժ ուներ , ինչքան ուժը պատում էր , ուժը պատածին չափ կամ ներդնում, ծախսում է իր նյութական միջոցները մինչև վերջին թելը , մինչև վերջին նոսելը :

Հոգին ու սիրտն են մարդու գոյության հիմքը, ուստի նվիրվածության ծայրագույն չափը արտահայտվում է ամբողջ հոգով, ամբողջ սրտով, հոգով-սրտով դարձվածքների միջոցով:

Թեև գիշեր-զերեկ դարձվածքով արտահայտվում է ժամանակի իմաստ, սակայն այն զերծ չէ չափի իմաստից: Այս դարձվածքում ընդգծված է ամբողջ օրը և գիշերը, և ցերեկը, և նաև շեշտվում է մի բանի անընդհատ, շարունակ կատարվելը:

Մի փոքր այլ է աստծու օր դարձվածքի իմաստը. այն նշանակում է ամեն օր և բոլոր օրերը միասին վերցրած: Տարածական ամբողջություն է արտահայտում աշխարհով մեկ տարածել , (տարածվել), երկրով մեկ տարածել, (տարածվել) տարբերակները:

Առարկաների և հատկանիշների չափ ու քանակի հավասարական հարաբերություն ցույց տվող դարձվածքներ:

Հավասարության հարաբերությունը արտահայտվում է նաև դարձվածքների միջոցով: Ի տարբերություն բառական միջոցների սրանցում հատկապես շեշտվում են պահանջ, առաջարկ այն մասին, որ մարդ պետք է ապրի, գործի, ծախսի իր հնարավորությունների, կարողությունների, ընդունակությունների համեմատ, այսինքն կշեռքի նժարին (նժարի վրա) ռնի, համապատասխանեցնի, չափի իր հնարավորությունները և ապա իր վերմակի (կառպետի) չափով ոտք մեկնի (պարզի) կամ ոտք մեկնի մեկի հետ (ոտք պարզի):

Տարբեր մարդկանց և իրերին նույնպիսի չափանիշով մոտենալու, չափելու, հավասարեցնելու դեպքում գործածում են միևնույն ակնոցով նայել, նույն (միևնույն) աղյուսով չափել դարձվածքները, մեկի չափով չափվելը հանգեցնում է սխալների, չէ՞ որ մարդիկ տարբեր են իրենց դիրքով, կրթությամբ, մտածողությամբ և տարիքով:

Այս ենթախմբերի դարձվածքները արտահայտում են նույնության, նմանության հատկանիշներ, որոնցով բացահայտվում են մարդկանց (նաև իրերի) տարբեր հատկանիշների, տարբեր կողմերի նույնը լինելը:

Ճիշտ նույնը լինելու ընդհանուր իմաստ է արտահայտում հաղ և (ու) նման դարձվածքը:

Գործելակերպով, բնավորությամբ նման մարդկանց բնութագրում են մի տաշտի խմող, մի խմողից հունցած և մի սանդի կտավ, մի սաքի հաց, մի շան նծած հոմանիշ դարձվածքներով: Այլ հոմանիշ դարձվածքներում նշվում են մարդկանց արտաքին նմանությունները՝ քքից (պնչից) թռած (ընկած), մի նիսած խնձոր, օդի եղնու նաքիլ, մի արտի գարի, մի ծառի խնձոր են:

Առարկաների, հատկանիշների չափ ու քանակի առավելական, նվազական, հավասարական աստիճանների նկատմամբ բացասական (չեզոք) հարաբերություն ցույց տվող դարձվածքներ *(դատարկ, ունայն, զուրկ, ոչինչ, (ոչնչացնել))*:

Նշված իմաստներին համապատասխան դարձվածքները նույնպես կարելի է երկու ենթախմբի բաժանել.

1. Դարձվածքներ, որոնք ունեն ընդհանուր իմաստ և վերաբերում են բոլոր տեսակի առարկաներին, որպես գոյություն չունեցողի և գործողություններին որպես ապարդյուն, իզուր կատարված աշխատանքներ, այսպես՝ ի ղեղև ելնել (հանել) և ի չիզ դաղձնել դարձվածքները ցույց են տալիս մարդու հույսերի, ակնկալիքների չիրականանալը, ջանքերի իզուր, ապարդյուն անցնելը: Հունական դիցաբանությունից վերցրած սիզիֆյան աշխատանք, դանաան տանաղ դարձվածքները, որոնց համարժեք է ժողովրդական մաղով ջուր նոել դարձվածքը, ցույց են տալիս ծանր, սակայն իզուր, ապարդյուն աշխատանք:

Շատ տիպիկ է մեկի ձեռքը դուդուկ տալ դարձվածքը, որով շեշտվում է դատարկ, սին խոստումներ տալը: Գոյություն չունեցող առարկայի մասին է ակնարկում հինգեղողղ անկուն, սաաի հինգեղողղ անիվ, ժիլետի թև, ինչպես նաև կատվի դղախտ (անբովանդակ կյանք) դարձվածքը: Բացարձակ դատարկություն է խորհրդանշում տղոհչելյան դատարկությունը: Ժամանակակից հնչեղություն ունեն փուչիկ նոակել և օդում (օդի մեջ) նոակել դարձվածքները:

Կյանքի չարն ու բարին, լավն ու վատը տեսնելով՝ մարդը եզրակացնում է՝ ինչ դատարկ է, ունայն՝ ունայնությունն ունայնությանց:

2. Այս ենթախմբի դարձվածքները համեմատաբար որոշակի են ներկայացնում կյանքի մի որևէ բնագավառ, մի իրողություն, երևույթ, առարկա անհետանալու, կորչելու, ոչնչանալու, գոյություն չունենալու մասին. եղնի (աշխարհի) եղեսից ջնջել դարձվածային տարբերակները ոչ միայն ամբողջովին, այլև իսպառ

ոչնչանալու մասին են խոսում: Այս իմաստին հարում է ոտով-գլխով (կորչել) դարձվածքը: Իմաստային մի այլ երանգ (անսպասելի) ունի ձեռքի հետ գնալ դարձվածքը:

Չափ ու քանակի մի շարք դարձվածքներում նկարագրվում է ժողովրդի սոցիալական ծանր վիճակը, ապրուստի միջոցներից զուրկ լինելը կամ զրկվելը: Հիշատակենք դրանցից մի երկուսը՝ ձեռքը սանսաս, գոռանը ծակ (նաև նշանակում է շռայլ), ձեռքը դատարկ (նաև ձեռնունայն), նիհար գոռան (գրպանը նիհար), մատը ծծելով ապրել, տաշտը ջրմաք, պարկը դատարկ, տաշտն ու մաղը կախել, (կապել), չոր տափի վրա թողնել, վերջին թելն ընկնել, հացից ընկնել և այլն:

Հասարակությունը հեգնական, ծաղրական վերաբերմունքի է արժանացնում նրանց, ովքեր տգետ են, հիմար, տխմար, թերուս, թեթևսոլիկ, մի խոսքով մտավոր կարողությունից զուրկ են կամ չունեն բավարար կարողություններ: Եվ ահա ստեղծվել է դարձվածքների մի ամբողջ շարք, ինչպես՝ գլուխը դատարկ, ներսը դատարկ, խելքից բոբիկ, խելքից առքատ, գլուխը ծակ, կոունկը ծակ, շապիկը կարճ, կոպեկի խելք չունի:

Հետևյալ դարձվածքները պակաս խելքի մասին են՝ խելքը կարճ, խելքի ծայրը (ծայր) սակաս, ծայր պակաս, ծուծը սակաս, կուտը պակաս, մաղը ծակ է, համի խելք, ծտի խելք, կարճ խելք, տանը դատարկ և ն[8]:

Վերոհիշյալ շարադրանքից պարզ է դառնում, որ դարձվածքներով հնարավոր չէ արտահայտել չափ ու կշռի միավորների (գրամ, կիլոգրամ, մետր, հերց, վոլտ, ռոպե, ժամ և ն), ինչպես նաև մի շարք բառ-տերմինների իմաստներ, որոնք ունեն չափ ու քանակի ընդհանուր իմաստ (արժեք, գին, վարձ, թոշակ, նպաստ, աշխատավարձ, հաշիվ և ն):

Դարձվածքները հիմնականում արտահայտում են հատկանիշների չափ ու քանակի աստիճանը առավելական, նվազական, հավասարական, հավաքական, ինչպես նաև այս հարաբերություններին չառնչվող կամ այս հարաբերությունների նկատմամբ չեզոք իմաստներ (դատարկ, ունայն, զուրկ, ոչինչ և ն):

---

[8] Սրանք թերևս կարելի է քննել նվազագույն ենթախմբի մեջ: